**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

**(հունվար-հունիս 2026թ.)**

1. Կրթության առանձնահատուկ պայմանների/ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ/ գնահատում

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների կողմից 2026թ-ի առաջին կիսամյակում իրականացվել է 51 գնահատում/ 33ԿԱՊԿ, 18ԿԶԱՊԿ/, որից 32 ԿԱՊԿ գնահատում իրականացվել է դպրոցներում, 1 ԿԱՊԿ գնահատում ՄԿՈՒ-ում, 18 ԿԶԱՊԿ գնահատում, որից 16-ը՝ ՆՈՒՀ_երում , 2-ը՝ ՏՄԱԿ-ում /ՆՈՒՀ չհաճախող/ : ԿԶԱՊԿ գնահատումներից 15-ը իրականացվել է առաջին անգամ, 3-ը՝ հերթական անգամ : 33 ԿԱՊԿ գնահատումից 9 -ը իրականացվել է առաջին անգամ, 24-ը՝ հերթական անգամ: Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների կողմից իրականացված խորհրդատվությունների արդյունքում բարձրացել է ծնողների իրազեկվածությունը /ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ/ գնահատման գործընթացի վերաբերյալ, որի արդյունքում նկատվում է ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ գնահատումների աճ:

2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների կողմից առաջին կիսամյակում մասնագիտական աջակցություն են ստանում թվով 235 երեխա, որոնցից՝ 178 սովորող՝ դպրոցում և նախակրթարաններում , 53 սան՝ ՆՈւՀ-ում , 4 ուսանող՝ ՄԿՈւ-ում:

Ծնողի դիմումի համաձայն թվով 5 երեխա՝ շարժունակության 3-րդ և 4-րդ աստիճանի, ինչպես նաև 2 ՆՈւՀ չհաճախող երեխա՝ բազմամասնագիտական թիմի կողմից աջակցություն են ստանում Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում:

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների կողմից իրականացված խորհրդատվությունների արդյունքում բարձրացել է ծնողների տեղեկացվածությունը, աջակցության տրամադրման գործընթացի վերաբերյալ:Ծնողների մոտ ձեռք ենք բերել մեծ վստահություն, ինչի շնորհիվ նկատվում է աջակցություն ստացող երեխաների թվի զգալի աճ:

ՍՏՄԱԿ-դպրոց-ծնող սերտ համագործակցությունը գտնվում է ամուր հիմքերի վրա:

3. Կարողությունների զարգացում /վերապատրաստում/

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների կողմից առաջին կիսամյակում թվով 20 ուսումնական հաստատություններում իրականացվել են վերապատրաստումներ, որոնցից 8 ՆՈւՀ-ում , 11 դպրոցում և 1 ՄԿՈւ-ում:

Իրականացվել է թվով 31 վերապատրաստում, որից ՆՈւՀ-ում 12 հատ, դպրոցում 17 հատ, ՄԿՈՒ-ում 2 հատ: Վերապատրաստումներին մասնակցել են ընդհանուր 452 անձ, որից 139 անձ ՆՈւՀ-ում , 280 անձ դպրոցում, 33 անձ ՄԿՈւ-ում:

Քանի որ 2025-2026 ուսումնական տարին հռչակվել է Անվտանգ և ապահով կրթության տարի, ՏՄԱԿ-ի վերեպատրաստման բաժնի մասնագետները մշտապես մասնակցում են ՀՄԿ-ի մասնագետների կողմից թեմայի շրջանակում իրականացված վերապատրաստումներին և ստացած նոր նյութերն ու փորձը փոխանցում են ուսումնական հաստատությունների մասնագետներին: Բոլոր ուսումնական հաստատություններում իրականացվում են համագործակցային աշխատանքներ:Դպրոցում վերապատրաստումներին մասնակից անձանց թիվը գերազանցում է պլանավորված թվից, քանի որ պահանջարկ է եղել բուլինգի կանխարգելման շրջանակում վերապատրաստումներ իրականացնել դպրոցականների և մասնագետների համար: ՆՈՒՀ-ում մեծ է եղել ծնողների ցանկությունն ու մասնակցությունը պլանավորված վերապատրաստումներին :

Վեապատրաստման թեմա ՆՈՒՀ

1. ԱՈւՁՊ

2. Գնահատման գործընթացի կազմակերպումը ՆՈւՀ-ում

3. Աջակցության գործընթացի կազմակերպումը ՆՈւՀ-ում

4. Ծնողավարության հմտություններ

5. Վակազության կանխարգելման և վաղ շտկողական լոգոպեդական , հոգեբանական միջամտության ուղիները

6. Կրթության աջակցող միջոցներ․ մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ

Վերապատրաստման թեմա դպրոց

1. ԱՈւՊ

2. Բուլինգի կանխարգելում

3. Կակազության կանխարգելման և վաղ շտկողական լոգոպեդական , հոգեբանական միջամտության ուղիները

4. Գնահատման գործընթացի կազմակերպումը դպրոցում

5. Աջակցության գործընթացի կազմակերպումը դպրոցում

6. Ծնողավարության հմտություններ

7. Կրթության աջակցող միջոցներ. մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ

8. Խաղերի հոգեբանական ազդեցությունը և դրանց բացասական հետևանքները երեխաների հոգեհուզական վիճակի և հոգեկան առողջության վրա

9. Անվտանգ և ապահով կրթական միջավայր

10. ՈՒսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առաողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման ընթացակարգ

4. Խորհրդատվություն

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից թվով 44 ուսումնական հաստատություններում իրականացվել է խորհրդատվություն, որից՝ 13-ը ՆՈւՀ-ում , 30-ը՝ դպրոցում , 1-ը՝ ՄԿՈւ-ում: Ընդհանուր խորհրդատվությունների թիվը կազմում է 156 հատ, որից 58 հատ ՆՈւՀ-ում , 88 հատ դպրոցում, 10 հատ ՄԿՈւ-ում: Խորհրդատվություն ստացել են ընդամենը 490 անձ, որից 176 անձ ՆՈւՀ-ում , 287 անձ դպրոցում, 27 անձ ՄԿՈւ-ում:

ՏՄԱԿ- ի մասնագետների կողմից խորհրդատվություն տրամադրվել է տարաբնույթ թեմաներով ՆՈՒՀ-ի, դպրոցի մասնագետներին և ծնողներին, անհրաժեշտությունից բխելով անձանց թիվը գերազանցել է պլանավորած թվից:

Խորհրդատվություններ իրականացվել են հետևյալ թեմաներով՝

1. ԱՈւՋՊ

2. ԱՈւՊ

3. Գնահատման գործընթացի կազմակերպումը ՆՈւՀ-ում, դպրոցում, ՄԿՈւ-ում

4. ՄՀ աջակցության գործընթացի կազմակերպումը ՆՈւՀ-ում, դպրոցում

5. Հանդիպում բազմամասնագիտակն թիմի անդամների հետ

6. Բռնության և բուլինգի կանխարգելումը ՆՈւՀ-ում, դպրոցում, ՄԿՈւ-ում

7. Անվտանգ և ապահով կրթական միջավայր

8. Խելամիտ հարմարեցումների արդյունավետությունը սովորողների կրթական գործընթացում

9. Ծնողավարման հմտություններ

## 5. Մշտադիտարկում

Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնը 2026թ.-ի առաջին կիսամյակում իրականացրել է 48 մշտադիտարկում, որոնցից 17-ը մանկապարտեզներում, 30-ը դպրոցներում, 1 ՄԿՈՒ-ում, :

## 6. Ֆիզիկական միջավայրային հարմարեցումներ

2026թ.-ի առաջին կիսամյակում դպրոցներում ու ՆՈՒՀ-երում ֆիզիկական միջավայրային հարմարեցումներ չի տրամադրվել:

## 7. Խելամիտ հարմարեցումներ

34 ուս. հաստատություն ստացել է խելամիտ հարմարեցումներ՝ 9 ՆՈՒՀ-երում, 25 դպրոցներում, ընդհանուր թվով 195 երեխայի համար, որոնցից մի մասը մասամբ, մի մասը ամբողջական:

Կենտրոնի անվանումը՝ «Սպիտակի Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝ _______________ (ստորագրություն) Նարինե Կոստումյան (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01» «07» 2026թ.